

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### 1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ 2

1.1 Օրենքներ -----	2
1.2 ՀՀ կառավարության որոշումներ -----	5
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ-----	10

### 2. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ 17

2.1 Ծրագրեր և կատարողական -----	17
2.2 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների -----	17
2.3 Միջազգային համագործակցություն -----	18
2.4 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում -----	18
2.5 Հարկային և մաքսային թվերի համառոտագիր -----	19

# 1. ԶԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1 Օրենքներ

Փաստաթուղթ	«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	22 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-22-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 4 (807), 26.01.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 30-րդ օրը

### Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքը չի տարածվում ապահովագրական ընկերությունների, վերաապահովագրական ընկերությունների, ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող անձանց՝ միայն այդ գործունեության մասով, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների (այդ գործունեության մասով), գրավատների, վճարահաշվարկային կազմակերպությունների վրա:

Սահմանվում է, որ ՀՀ տարածքում անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանական գործունեություն իրականացնողների և կազմակերպությունների կողմից առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցե-

լիս կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում (ներառյալ՝ կանխավճարները) հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է, բացառությամբ վերոնշյալ օրենքով սահմանված դեպքերի:

Սահմանվում է նաև, որ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր չէ ավտոմոբիլային, ջրային, երկաթուղային, օդային տրանսպորտով կատարվող ուղևորափոխադրումների, բեռնափոխադրումների իրականացման և երթևեկության տոմսերի վաճառքի, վերգետնյա տրանսպորտային միջոցներով իրականացվող գյուղատնտեսական արտադրանքի, թերթերի, ամսագրերի, ինչպես նաև ցիստեռներից (տակառներից) լցնովի գարեջրի, կվասի, կաթի կամ թանի վաճառքի, խաղատների և (կամ) շահումով խաղերի կազմակերպման գործունեության տեսակների մասով:

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ հսկիչ-դրամարկղային մեքենան տեղադրվում է առևտրի օբյեկտի կամ ծառայության մատուցման վայրի այն հատվածում, որտեղ կատարվում է վճարումը:

Սահմանվում են նոտարական և փաստաբանական գործունեություն իրականացնողների կողմից հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման առանձնահատկությունները: Օրենքում կատարված մեկ այլ լրացմամբ սահմանվում է, որ առևտրի այն օբյեկտներում կամ ծառայության մատուցման այն վայրերում, որտեղ կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը իրականաց-



նում են այնպիսի գործունեություն, որի համար կանխիկ դրամով իրականացվող դրամական հաշվարկների դեպքերում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումն օրենքով պարտադիր չէ, տեղադրված և կիրառվող հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով արձանագրված շրջանառությունները համարվում են չհիմնավորված, և նման հսկիչ-դրամարկղային մեքենաները հարկային մարմնում գրանցումից հանվում են ՀՀ կառավարության սահմանած կարգով:

Սահմանվում են հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների կողմից ցանցային կապի միջոցներով յուրաքանչյուր մեքենայով օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ հարկային մարմին տեղեկություններ ուղարկելու կարգը և այդ կարգը խախտելու դեպքում կիրառվող պատասխանատվության միջոցները:

Օրենքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ օրենքով նախատեսված հսկողության իրականացման նպատակով հարկային մարմինը «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքին համապատասխան իրականացնում է ստուգումներ և ուսումնասիրություններ, ընդ որում՝ ստուգումներ անցկացնելու հանձնարարագրի վավերապայմանների, դրանք ստուգվող



սուբյեկտին ներկայացնելու պահանջների նկատմամբ կիրառվում են վերոնշյալ օրենքի հավելվածի դրույթները:

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված պատասխանատվության կիրառման համար հիմք է հանդիսանում նաև «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացված ուսումնասիրության արդյունքում արձանագրված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտումը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	22 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-24-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 4 (807), 26.01.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Օրենսգրքում կատարված փոփոխությամբ ուժը կորցրած են ճանաչվել «Ժամանակավոր ներմուծում» և «Ժամանակավոր արտահանում» մաքսային ռեժիմներով բացթողնված ապրանքների ներմուծման և արտահանման ժամկետը նշված ռեժիմներով մեկ տարուց ավել՝ ՀՀ կառավարության կողմից միայն ֆինանսական վարձակալության տրման նպատակով երկարաձգելու և այդ ժամկետը՝ ֆինանսական վարձակալության պայմանագրի գործողության

ժամկետը չգերազանցելու վերաբերյալ դրույթները:

Սահմանվում է, որ ՀՀ կառավարության որոշմամբ կարող է թույլատրվել պետության կարիքների, գիտահետազոտական, կրթական, մշակութային, մարդկանց և կենդանիների առողջության պաշտպանության, շրջակա միջավայրի պահպանության նպատակներով, ինչպես նաև ընտրված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներդրումային

ծրագրերի շրջանակներում ներմուծված և արտահանված, ներառյալ ֆինանսական վարձակալությամբ տրված ԱՏԳԱԱ 84-89-ը ապրանքային ծածկագրին դասվող, ապրանքների համար «Ժամանակավոր ներմուծում» և «Ժամանակավոր արտահանում»

մաքսային ռեժիմների ժամկետի երկարաձգումը մեկ տարուց ավելի ժամկետով: Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության և ժամկետների երկարաձգման կարգն ու ժամկետները սահմանում է ՀՀ կառավարությունը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	22 դեկտեմբերի 2010թ, ՀՕ-25-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 4 (807), 26.01.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Օրենսգրքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման մեքենան պետք է վերջին անգամ հաշվառումից հանված լինի այն երկրում, որտեղ ՀՀ մշտական բնակության ժամանող անձը վերջին անգամ մշտապես բնակվել է՝ նախքան ՀՀ-ում որպես մշտական բնակիչ հաշվառվելը:

Սահմանվում է, որ «վերաներմուծում» ռեժիմի շրջանակներում նախկինում «ներմուծում» ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված և «վերարտահանում» մաքսային ռեժիմով արտահանված ապրանքների ներմուծման դեպքում գանձվում են միայն օրենքով սահմանված կարգով արտահանման ժամանակ վերադարձված մաքսային վճարները:

Օրենսգրքում կատարված լրացմամբ սահմանվում է, որ օտարերկրյա անձանց կողմից «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ներմուծվող ԱՏԳԱԱ 8702 և 8703 ծածկագրերին դասվող ապրանքների բացթողումը թույլատրվում է հայտարարատուի խնդրարկած, սակայն օտարերկրյա անձի ՀՀ-ում գտնվելու՝ օրենքով սահմանված ժամկետից ոչ ավելի ժամկետով:

Սահմանվում է նաև, որ ՀՀ-ում մշտապես հաշվառված կամ մշտապես բնակվող անձանց, ինչպես նաև ՀՀ-ում պետական գրանցում ստացած անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից ԱՏԳԱԱ

8702 և 8703 ծածկագրերին դասվող ապրանքների տեղափոխումը ՀՀ մաքսային սահմանով «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով թույլատրվում է մեկ տարվա ընթացքում միայն երկու անգամ՝ տասնհինգ օրը չգերազանցող ժամկետով: Այս դրույթի իմաստով մշտապես բնակվող է համարվում ՀՀ-ում վերջին մեկ տարվա ընթացքում ընդհանուր առմամբ 180 և ավելի օր գտնվող անձը:

Օրենսգրքի մաքսատուրքերի դրույթաչափերի հոդվածը լրացվել է նոր ԱՏԳԱԱ ծածկագրերով, հանվել են 190531, 190532 և 8443 31 910 ԱՏԳԱԱ ծածկագրերը:

Սահմանվում է, որ Ֆիզիկական անձինք կարող են ՀՀ մաքսային սահմանով առանց



մաքսատուրք վճարելու տեղափոխել մինչև 20 կգ 150 հազար դրամը չգերազանցող մաքսային արժեքով ապրանքներ: ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման գույքը պետք է ներմուծվի մշտական բնակության նպատակով ՀՀ-ում հաշվառվելու օրվան նախորդող կամ հաջորդող 180 օրերի ընթացքում:

Սահմանվում է, որ ապրանքային և տրանսպորտային միջոցների հայտարարագրումը կարող է իրականացվել նաև էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով ներկայացված մաքսային հայտարարագիրը մաքսային մարմինների կողմից ընդունվելուց հետո համարվում է մաքսային հսկողության համար անհրաժեշտ իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթուղթ:

Օրենսգրքում կատարված լրացմամբ սահմանվում են մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների տրանսպորտային միջոցների նկատմամբ գործող սահմանափակումները:

Հայտարարատուն պարտավոր է օրենսգրքով սահմանված փաստաթղթերը և տեղեկությունները, ինչպես նաև ապրանքները և տրանսպորտային միջոցները մաքսային մարմինների կողմից մաքսային հայտարարագիրն ընդունելուց հետո տասնօրյա ժամկետում ներկայացնել մաքսային հսկողության:

Սահմանվում են մաքսային հսկողության ընտրողականության սկզբունքները, մասնավորապես սահմանվում է, որ մաքսային հսկողության ձևերի ընտրության ժամանակ կիրառվում է ռիսկերի կառավարման համա-

կարգը, որն ուղղված է մաքսային մարմինների ռեսուրսներն առավել արդյունավետ օգտագործելու միջոցով օրենսդրության այն խախտումները վերացնելուն, որոնք՝

**ա)** ունեն կրկնող բնույթ

**բ)** կապված են մաքսային վճարներից խուսափելու հետ

**գ)** կապված են տնտեսական անվտանգության, տնտեսական շահերի և ներքին շուկայի պաշտպանվածության ապահովման հետ:

Ռիսկերի գնահատման չափանիշների մեթոդաբանությունը սահմանում է ՀՀ կառավարության լիազորած մարմինը, որի հիման վրա վերադաս մաքսային մարմինը հաստատում է ռիսկերի գնահատման աստիճանները:

Մեկ այլ լրացմամբ սահմանվում է, որ ՀՀ-ում գործող օտարերկրյա պետությունների պատվո հյուպատոսարաններն առանց մաքսային վճարների վճարման կարող են ներմուծել հյուպատոսական հիմնարկի պաշտոնական օգտագործման համար նախատեսված ապրանքներ, որոնք հյուպատոսական հիմնարկը ստանում է ուղարկող պետությունից կամ վերջինիս պահանջով:

Օրենսգրքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ անձը, որից օրենսգրքով սահմանված կարգով կամ տուգանքի, մաքսային վճարների գանձումն ապահովելու նպատակով վերցվել են ապրանքներ՝ անկախ սեփականության պատկանելությունից, կարող է դրանք ստանալ տուգանքի վճարումից, մաքսային վճարների և պարտավորությունների կատարումից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում:

## 1.2 | ՀՀ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«Ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի գումարներն առանց ուսումնասիրության կամ ստուգման հաշվանցելու կամ վերադարձնելու առումով հարկ վճարողին ռիսկային համարելու չափանիշները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	30 դեկտեմբերի 2010թ, N 1758-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 4 (807), 26.01.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

## Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվում են հարկ վճարողներին ռիսկային համարելու չափանիշները՝ օրենքով սահմանված չափով և կարգով որոշվող՝ հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա ԱԱՀ-ի և (կամ) ակցիզային հարկի գումարներն առանց ուսումնասիրության հաշվանցելու և (կամ) վերադարձնելու համար: Նշված որևէ չափանիշին համապատասխանելու դեպքում ԱԱՀ-ի և (կամ) ակցիզային հարկի գումարներն առանց ուսումնասիրության հաշվանցելու և (կամ) վերադարձնելու առումով հարկ վճարողը համարվում է ռիսկային:

Օրենքով սահմանված չափով և կարգով որոշվող՝ հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա ԱԱՀ-ի և (կամ) ակցիզային հարկի գումարները հաշվանցվում և (կամ) վերադարձվում են միայն ուսումնասիրության կամ ստուգման արդյունքներով՝ եթե՝

**1.** ԱԱՀ-ի և (կամ) ակցիզային հարկի գումարներն առանց ուսումնասիրության հաշվանցելու և (կամ) վերադարձնելու առումով հարկ վճարողը նշված որոշմամբ սահմանված չափանիշներով համարվում է ռիսկային, կամ՝

**2.** ԱԱՀ-ի և (կամ) ակցիզային հարկի գումարներն առանց ուսումնասիրության հաշվանցելու և (կամ) վերադարձնելու առումով հարկ վճարողը նշված որոշմամբ սահմանված չափանիշներով չի համարվում ռիսկային, սակայն հաշվետու ամսվա արդյունքներով (կամ հաշվետու եռամսյակի համար ամսական հաշվարկով) հաշվանցման և (կամ) վերադարձման ենթակա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի հանրագումարը, իսկ ակցիզային հարկ չվճարողների համար՝ ԱԱՀ-ի գումարը 2011թ-ին գերազանցում է 5 մլն դրամը, իսկ 2012թ-ին՝ 10 մլն դրամը:

Վերոնշյալ որոշմամբ սահմանված չափանիշները կիրառվում են համակարգչային ավտոմատացված ծրագրով հարկ վճարողների ընտրության միջոցով:

Փաստաթուղթ	«Ստուգումներ իրականացնելու լիազորություն ունեցող մարմինների կողմից տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական կամ տնտեսական գործունեությանն առնչվող ստուգումների արդյունքների վերաբերյալ տեղեկությունները Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնելու կարգը հաստատվելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	30 դեկտեմբերի 2010թ, N 1759-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 4 (807), 26.01.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

## Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվում է ստուգումներ իրականացնելու լիազորություն ունեցող մարմինների կողմից տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական կամ տնտեսական գործունեությանն առնչվող ստուգումների արդյունքների վերաբերյալ տեղեկությունները ՀՀ ԿԱ ՊԵԿ ներկայացնելու կարգը, որի համաձայն ստուգումներ իրականացնելու լիազորություն ունեցող պետական մարմինները, որոնք իրականացնում են տնտեսավարող սուբյեկտի ամբողջ ֆինանսատնտեսական գործունեության փաստացի իրավի-

ճակը պարզելուն ուղղված (համալիր) և գործունեության առանձին տեսակի իրականացման լիցենզիայի հիման վրա իրականացվող գործունեության ստուգումներ, ՀՀ ԿԱ ՊԵԿ են ներկայացնում տեղեկություններ այդ ստուգումների արդյունքների վերաբերյալ: Նշված կարգի դրույթները չեն տարածվում տնտեսավարող սուբյեկտի գործունեության հետ կապված առանձին տարրերի փաստացի իրավիճակը պարզելուն ուղղված (թեմատիկ) ստուգումներ իրականացնող մարմինների վրա:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հունիսի 31-ի N 314 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	30 դեկտեմբերի 2010թ, N 1770-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 6 (809), 02.02.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվում ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության տարածքում առաքվող կամ տրամադրվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) մասին» N 314 որոշման մեջ, որոնց համաձայն սահմանվում է, որ որոշմամբ հաստատված ՀՀ տարածքում առաքվող կամ տրամադրվող, կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) կարգի դրույթները չեն տարածվում՝

**ա)** «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն ԱԱՀ վճարող համարվող այն անձանց վրա, որոնք հարկային հաշիվները ԱԱՀ-ի հաշվետու ժամանակաշրջանում օրենքով սահմանված կարգով դուրս են գրում բացառապես էլեկտրոնային եղանակով: Այն ԱԱՀ վճարողները, որոնք ԱԱՀ-ի որևէ հաշվետու ժամանակաշրջանում էլեկտրոնային եղանակից բացի հարկային հաշիվներն օրենքով սահմանված կարգով դուրս են գրել նաև թղթային եղանակով, նշված կարգին համապատասխան գրանցումները (հաշվառումը) իրականացնում են առաջին անգամ թղթային եղանակով հարկային հաշվի դուրսգրման օրվանից մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը (ներառյալ),

**բ)** «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ԱԱՀ վճարող չհամարվող այն անձանց վրա, որոնց համար օրենքով սահմանված կարգով հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանակահատվածում,

**գ)** ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնողների վրա՝ գազալցման (գազալիցքավորման) այն կետերի մասով, որտեղ ՀՀ կառավարության սահմանած տեխնիկական կանոնակարգին համապատասխան առկա են լիցքավորման բաշխիչ աշտարակներ,

**դ)** բանկերի, ապահովագրական ընկերությունների, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների, վճարահաշվարկային և վարկային կազմակերպությունների վրա,

**ե)** «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հաստատագրված վճար վճարողների վրա՝ բացառապես հաստատագրված վճարով հարկվող գործունեության մասով (անկախ օրենքով սահմանված սահմանային չափերը գերազանցելու հանգամանքից):

Փաստաթուղթ	«Գույքը հաշվառող կամ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող մարմինների կողմից գույքի և գույքի նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունները Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	30 դեկտեմբերի 2010թ, N 1775-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 7 (810), 09.02.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվում են ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունները ՀՀ ԿԱ ՊԵԿ ներկայացնելու, ինչպես նաև շարժական գույքը հաշվառող կամ շարժական գույքի նկատմամբ իրավունքները գրանցող մարմինների կող-

մից շարժական գույքի և դրանց սեփականատերերի վերաբերյալ տեղեկությունները ՀՀ ԿԱ ՊԵԿ ներկայացնելու կարգերը: Նշված որոշման համաձայն առաջին տեղեկությունը ներկայացվում է 2011 թվականի առաջին եռամսյակի համար՝ մինչև 2011 թվականի հուլիսի 15-ը:

Փաստաթուղթ	«Հարկ վճարողների կողմից սպառողներին բնական գազի, էլեկտրական էներգիայի, խմելու և ոռոգման ջրի մատակարարման գործարքների վերաբերյալ հարկային մարմին տեղեկություններ ներկայացնելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	30 դեկտեմբերի 2010թ, N 1773-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 6 (809), 02.02.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է որոշման ուժի մեջ մտնելու եռամսյակին հաջորդող ժամանակաշրջանում մատակարարման գործարքների վրա

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվում է հարկ վճարողների կողմից սպառողներին բնական գազի, էլեկտրական էներգիայի, խմելու և ոռոգման ջրի մատակարարման գործարքների վերաբերյալ հարկային մարմին տեղեկություններ ներկայացնելու կարգը: Նշված որոշման դրույթները չեն տարածվում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց բնական գազի, էլեկտրական էներգիայի, խմելու և ոռոգման ջրի մատակարարման գործարքների վրա: Նշված որոշմամբ սահմանված տեղեկությունները չեն ներկայացվում:



**1.** | Եթե բնական գազի (բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեության մասով), էլեկտրական էներգիայի, խմելու և ոռոգման ջրի մատակարարման գործարքների արժեքը չի գերազանցում 1 մլն դրամը,

**2.** | բնական գազի, էլեկտրական էներգիայի, խմելու և ոռոգման ջրի մատակարարման այն գործարքներին վերաբերող տեղեկությունները, որոնց մասով ՀՀ կառավարության 11.11.2010թ. N 1504-Ն որոշման համաձայն էլեկտրոնային եղանակով դուրս են գրվել հարկային հաշիվներ:

Փաստաթուղթ	«Գերավճարների և (կամ) գերավճարից տարբերվող գումարների հետ վերադարձն օրենքով սահմանված ժամկետից ուշացնելու համար տույժերի հաշվարկման, հաշվանցման և (կամ) վճարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	10 փետրվարի 2011թ, N 85-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 10 (813), 18.02.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը



### Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվում է գերավճարների և (կամ) գերավճարից տարբերվող գումարների հետ վերադարձն օրենքով սահմանված ժամկետից ուշացնելու համար տույժերի հաշվարկման, հաշվանցման և (կամ) վճարման կարգը: Սահմանվում է, որ մինչև 2011 թվականի հունվարի 1-ն առաջացած

և օրենքով սահմանված ժամկետներում չվերադարձված կամ չհաշվանցված գերավճարների և (կամ) գերավճարից տարբերվող գումարների նկատմամբ հաշվարկման ենթակա տույժերի հաշվառումն առաջին անգամ կատարվում է մինչև 2011 թվականի մայիսի 1-ը:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հունիսի 31-ի N 315 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	30 դեկտեմբերի 2010թ, N 1771-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 6 (809), 02.02.2011թ.
Ուժի մեջ է	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

### Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվում է, որ ՀՀ տարածքում վաճառվող արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) կարգի դրույթները չեն տարածվում ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնողների վրա ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) այն կետերի մասով, որտեղ, ՀՀ կառավարության սահմանած տեխնիկական կանոնակարգին համապատասխան, առկա են լիցքավորման բաշխիչ աշտարակներ, «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հաստատագրված վճար վճարողների վրա՝ բացառապես հաստատագրված վճարով

հարկվող գործունեության մասով (անկախ օրենքով սահմանված սահմանային չափերը գերազանցելու հանգամանքից): Սահմանվում է նաև, որ գրանցման գրքում սխալ թույլ տալու դեպքում տողի վրա գրիչով գիծ է քաշվում այնպես, որ հնարավոր լինի կարդալ նախկին գրառումը և անմիջապես հաջորդ տողում (սխալ գրառումից հետո գրքում տողեր լրացված լինելու դեպքում՝ վերջին գրառման տողից հետո) կատարվում ճիշտ գրառումը: Ձևաված տողի կողքին կատարվում է համապատասխան նշագրում՝ սխալ գրառման մասին, նշելով սխալի ուղղման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը, ճիշտ գրառման տողի համարը՝ հաստատելով գրառում կատարողի ստորագրությամբ:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 1-ի N 299 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	30 դեկտեմբերի 2010թ, N 1761-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 4 (807), 26.01.2011թ.
Ուժի մեջ է	2011 թվականի ապրիլի 1-ից

### Համառոտ նկարագիր

Ուժը կորցրած են ճանաչվում ՀՀ կառավարության 01.04.2002թ. «Որոշ ապրանքների արտադրության և շրջանառության ֆիզի-

կական ծավալների ու գների վերաբերյալ հաշվետվությունները հարկային մարմիններ ներկայացնելու կարգը հաստատելու

մասին» N 299 որոշման 2-րդ կետի գե ենթա- կետը և որոշման N 4 հավելվածը, որով սահմանվում էր այն օգտակար հանածոնե- րի և դրանց արտադրատեսակների ցանկը, որոնց արդյունահանման, շրջանառության

ֆիզիկական ծավալների և գների (այդ թվում՝ միջին) վերաբերյալ հարկ վճարող- ները հաշվետվություններ են ներկայաց- նում հարկային մարմիններ:

### 1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ	«Յարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ և «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածներով սահմանված տուգանքների գումարները մինչև օրենքով սահմանված ժամկետների վերջին օրը ներառյալ վճարելու դեպքերում տուգանքների գումարների կրկնապատկման վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	30 դեկտեմբերի 2010թ., 15 դեկտեմբերի 2010թ., N 27
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N 3 (386), 01.02.2011թ.

#### Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ «Յարկերի մա- սին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով և «Հսկիչ- դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահ- մանված տուգանքների գումարները մինչև օրենքով սահմանված ժամկետների վերջին օրը ներառյալ վճարելու դեպքերում տու- գանքի գումարի կրկնապատկման դրույթը կիրառելի չէ՝ պատասխանատվության մի- ջոցի կիրառման համար հիմք համարվող իրավախախտման փաստի բացակայու- լյան հիմնավորմամբ (պարտականությունը բովանդակային առումով կատարված է):



Փաստաթուղթ	«2011 թվականի հունվարի 1-ից բենզինի և (կամ) դիզելային վառելիքի արտադրանքի հարկման որոշ հարցերի վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	30 դեկտեմբերի 2010թ., 22 դեկտեմբերի 2010թ., N 31
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N 31 (383), 29.12.2010թ.

#### Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ բենզինի 1 տոննայի համար սահմանված ակցիզային հարկի և օրենսդրությամբ սահմանված կար- գով հաշվարկված ԱԱՀ-ի հանրագումարը 112000 ՀՀ դրամից պակաս լինելու դեպքում

ավելացվող գումարը բաղկացած է 2 մասից՝ ակցիզային հարկի գումար և դրա նկատ- մամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումար: 2011թ-ի հունվարի 1-ի դրությամբ ներմու- ծողների մոտ առկա բենզինի և (կամ) դիզե-



լային վառելիքի ապրանքային մնացորդների իրացման գործարքների մասով հարկային պարտավորությունները հաշվարկվում են մինչև 2011թ-ի հունվարի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով: Ապրանքային մնացորդների օտարման մասով ներմուծողները վճարում են շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող հաստատագրված վճար: Հարկ վճարողների մոտ 2011թ-ի հունվարի 1-ի դրությամբ առկա բենզինի և (կամ) դիզելային վառելիքի ապրանքային մնացորդների իրացման գործարքների մասով հարկային հաշիվներ դուրս չեն գրվում:

2011թ-ի հունվարի 1-ից հետո բենզինի իրացումների դեպքում «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարկային հաշիվներ դուրս են գրվում:

**1.** բենզին ներմուծողների կողմից՝ 2011թ. հունվարի 1-ից հետո ներմուծված բենզինի օտարման՝ օրենքով ԱԱՀ-ի 20% դրույքաչափով հարկվող գործարքների մասով, բացառությամբ՝ բենզինի և (կամ) դիզելային վառելիքի մանրածախ առևտրի կետերի միջոցով իրացման գործարքների,

**2.** բենզինի ներմուծող չհանդիսացող անձանց կողմից՝ հարկային հաշիվներով ձեռք բերված բենզինի օտարման այն գործարքների մասով, որոնք ենթակա են ԱԱՀ-ի 20% դրույքաչափով հարկման:

2011թ-ի հունվարի 1-ից հետո բենզինի գծով ձեռքբերումների մասով ԱԱՀ վճարողները ԱԱՀ-ի գումարների հաշվանցումներ կարող են կատարել միայն հարկային հաշվի առկայության դեպքում:

2011թ-ի հունվարի 1-ից հետո ՀՀ բենզին և (կամ) դիզելային վառելիք ներկրող՝ ԱԱՀ վճարող համարվող հարկ վճարողները հաշվանցման իրավունք են ձեռքբերում ԱԱՀ-ով հարկվող գործարքների մասով:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կողմից այլ պետությունների հետ եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու մասին համաձայնագրերում ծառայությունների առնչությամբ «մշտական հաստատություն» հասկացության կիրառման վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	12 հունվարի 2011թ, N 2
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր N 3 (386), 01.02.2011թ.

### Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ «մշտական հաստատություն» հասկացությունը նշանակում է ձեռնարկատիրական գործունեության իրականացման կայուն վայր, որի միջոցով կազմակերպությունը (տվյալ դեպքում՝ ոչ ռեզիդենտը) ամբողջությամբ կամ մասամբ իրականացնում է իր առևտրային գործունեությունը: Այսպիսով, մշտական հաստա-

տության ձևավորման համար անհրաժեշտ է, որ միաժամանակ ապահովված լինեն հետևյալ պայմանները.

**ա.** ձեռնարկատիրական գործունեության իրականացման վայրի գոյությունը,

**բ.** ձեռնարկատիրական գործունեության իրականացման վայրը պետք է լինի «կայուն»,



**գ.** կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունը պետք է իրականացվի ձեռնարկատիրական գործունեության այդ կայուն վայրի միջոցով, որը նշանակում է, որ կազմակերպությունից այս կամ այն կերպ կախում ունեցող անձինք ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնում են այն պետությունում, որտեղ գտնվում է ձեռնարկատիրական գործունեության իրականացման այդ կայուն վայրը:

«Ձեռնարկատիրական գործունեության իրականացման վայր» սահմանումը ներառում է ցանկացած ձևի տարածք, միջոցներ կամ սարքավորումներ, որոնք օգտագործվում են կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար՝ անկախ նրանից թե դրանք օգտագործվում են բացառապես այդ նպատակով, թե՛ ոչ: Ձեռնարկատիրական գործունեության իրականացման վայր կարող է ձևավորվել նաև այն դեպքում, երբ առկա չէ տարածք,

կամ երբ այն չի պահանջվում ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնելու համար, սակայն կազմակերպությունն ունի ոչ մեծ տարածք, որը տնօրինում է իր հայեցողությամբ:

Որպես կանոն, որպես ժամկետ, որի ընթացքում իրականացվող ծրագրերի շրջանակներում իր աշխատողների կամ կազմակերպության կողմից վարձած այլ անձնակազմի միջոցով ծառայություններ մատուցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը դիտվում է որպես ՀՀ-ում մշտական հաստատություն ունեցող, ընդունվում է 6 ամիսը գերազանցող ժամանակահատվածը ցանկացած 12-ամսյա ժամանակահատվածում: Ընդ որում, պարտադիր չէ, որ գործունեությունն իրականացվի առանց ընդհատումների:

Միաժամանակ, ելնելով ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև կնքված յուրաքանչյուր պայմանագրի առանձնահատկություններից, ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կարող է դիտվել որպես ՀՀ-ում մշտական հաստատություն ունեցող՝ նաև գործունեությունը 6 ամսից պակաս ժամկետում իրականացնելու դեպքում: Մասնավորապես, երբ՝

- ծրագրերն իրականացնելիս պահպանվում է աշխարհագրական և առևտրային ամբողջականությունը,
- ոչ ռեզիդենտի տարեկան համախառն եկամտի 50 և ավելի տոկոսը ձևավորվում է ՀՀ տարածքում,
- ոչ ռեզիդենտ կազմակերպությունը ստեղծված է բացառապես ՀՀ տարածքում ծառայություններ մատուցելու համար:

Փաստաթուղթ	«2011 թվականի 1-ին եռամսյակի համար ռեզիդենտների կողմից շահութահարկի կանխավճարի և նվազագույն շահութահարկի գումարների վճարման վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	14 հունվարի 2011թ. N 3
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական կայքի ակտերի տեղեկագիր N 4 (387), 15.02.2011թ.

### Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ.

**1.** 2011թ-ից սկսած յուրաքանչյուր եռամսյակում (մինչև տվյալ եռամսյակի վերջին ամսվա 15-ը) ռեզիդենտը կատարում է շա-

հութահարկի եռամսյակային վճարումներ՝ շահութահարկի կանխավճարի եռամսյակային գումարի և նվազագույն շահութահարկի եռամսյակային գումարի առավելագույն-

նի չափով: 2011թ. ընթացքում ռեզիդենտը շահութահարկի ամսական վճարումներ չի կատարում:

Եթե ռեզիդենտը 2011թ. ընթացքում հանդիսանում է շահութահարկի կանխավճար վճարող, ապա 2010թ-ի համար ներկայացվող շահութահարկի հաշվարկում 1500 տողում լրացնում է 2011թ. շահութահարկի կանխավճարի գումարը՝ որպես 1501 և 1502 տողերի հանրագումարի 1/6-ի և 1503 տողի հանրագումար: Ընդ որում՝ այն ռեզիդենտները, որոնք հաշվետու տարին ավարտել են հարկային վնասով (տող 0500 < 0) կամ չեն ունեցել հարկվող շահույթը (տող 0500 = 500,0), կամ որոնց հաշվետու տարվա փաստացի շահութահարկը չի գերազանցել 500,0 հազ. դրամը (տող 1501+տող 1502 < 500,0 կամ տող 1501+ տող 1502 = 500,0), այդ տողը չեն լրացնում:

**2.** Եթե 2010թ. համար շահութահարկի հաշվարկը ներկայացվել է մինչև 15.03.2011թ, ապա 2011թ. 1-ին եռամսյակի համար շահութահարկի կանխավճարի վճարման վերջնաժամկետն է՝ 15.03.2011թ. և, եթե ռեզիդենտը 2011 թ. ընթացքում հանդիսանում է շահութահարկի կանխավճար վճարող, ապա 2011թ. 1-ին եռամսյակի համար վճարման ենթակա կանխավճարի գումարը կազմում է 2010թ. շահութահարկի

փաստացի գումարի և (կամ) շահութահարկի հաշվարկային մեծության 1/6-ը:

Եթե 2010թ. համար շահութահարկի հաշվարկը ներկայացվել է 15.03.2011թ-ից հետո, ապա 2011թ. 1-ին եռամսյակի համար շահութահարկի կանխավճարի վճարման վերջնաժամկետն է՝ 15.06.2011թ. և, եթե ռեզիդենտը 2011թ. ընթացքում հանդիսանում է շահութահարկի կանխավճար վճարող, ապա 2011թ. 1-ին և 2-րդ եռամսյակների համար վճարման ենթակա կանխավճարների հանրագումարը կազմում է 2010թ. շահութահարկի փաստացի գումարի և (կամ) շահութահարկի հաշվարկային մեծության 1/3-ը:

**3.** 2011թ. 1-ին եռամսյակում նվազագույն շահութահարկի վճարման վերջնաժամկետն է՝ 15.03.2011թ, որը հաշվարկվում է 2010թ. 4-րդ եռամսյակի ընթացքում ապրանքների (բացառությամբ՝ հիմնական միջոցների, ինչպես նաև արժեթղթերի և ֆոնդային ապրանքների), արտադրանքի իրացումից և ծառայությունների մատուցումից հաշվեգրման եղանակով հաշվարկված եկամտի և նույն ժամանակահատվածում այդ եկամտի 50%-ը չգերազանցող մասով՝ հիմնական միջոցների համար հաշվարկված ամփոփագրի մասնահումների տարբերությունից ելնելով:

Փաստաթուղթ	«2010 թվականի հաշվետու տարվա համար ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկների և ֆինանսական հաշվետվությունների, ոչ ռեզիդենտների կողմից տարեկան եկամուտների մասին հայտարարագրերի, կամայական ձևով հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	14 հունվարի 2011թ, N 4
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 4 (387), 15.02.2011թ.

### Համառոտ նկարագիր

**1.** Ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից 2010թ. հաշվետու տարվա համար 01.01.2011թ-ից հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված ձևերով ֆինանսական հաշվետվություններ հարկային տեսչության մարմիններ չեն ներկայացվում:

**2.** Շահութահարկ և (կամ) հաստատագր-

ված վճար վճարող հանդիսացող ռեզիդենտների (այդ թվում՝ գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ (հիմնականում) զբաղված կազմակերպությունների, ոչ առևտրային կազմակերպությունների (բացառությամբ՝ շահութահարկ վճարող չհանդիսացող պետական կամ համայնքա-

յին ոչ առևտրային կազմակերպություններին)) կողմից 2010թ. համար 01.01.2011թ-ից հետո իրենց հաշվառման վայրի հարկային տեսչության մարմիններին ներկայացվում են շահութահարկի հաշվարկներ, իսկ 2010թ. հաշվետու տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված կազմակերպությունների կողմից՝ շահութահարկի պարզեցված հաշվարկներ:

**3.** 2010թ. հաշվետու տարում հայաստանյան աղբյուրներից եկամուտներ ստացող ոչ ռեզիդենտների կողմից 2010թ. համար 01.01.2011թ-ից հետո հարկային տեսչության մարմիններին ներկայացվում են տարեկան եկամուտների մասին հայտարարագրեր և կամայական (իր կողմից որոշված)

ձևով հաշվետվություն իր գործունեության մասին: 2010թ. ընթացքում հայաստանյան աղբյուրներից եկամուտներ ստացող ոչ ռեզիդենտները տարեկան եկամուտների մասին հայտարարագիր և իր գործունեության մասին կամայական ձևով հաշվետվություն չեն ներկայացնում միայն այն դեպքերում, երբ ՀՀ տարածքում ստորաբաժանում չունեցող ոչ ռեզիդենտները հայաստանյան աղբյուրներից եկամուտներ են ստացել բացառապես արտաքին տնտեսական գործունեությունից և (կամ) ստացել են բացառապես այնպիսի եկամուտներ, որոնցից շահութահարկը հաշվարկելու, պահելու և պետական բյուջե վճարելու պարտավորությունը դրված է հարկային գործակալների վրա:

Փաստաթուղթ	«Կազմակերպության կողմից վարձակալված և աշխատողի ժամանակավոր օգտագործմանը հանձնված բնակարանի համար գործատուի կողմից վճարվող վարձակալական վճարների հարկման մի քանի հարցերի վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	19 հունվարի 2011թ., 01 փետրվարի 2011թ., N 6
Յրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N 4 (387), 15.02.2011թ.

### Համառոտ նկարագիր

Կազմակերպության (գործատուի) կողմից վարձակալված և աշխատողի ժամանակավոր օգտագործմանը հանձնված բնակարանի համար գործատուի կողմից վճարվող վարձակալական վճարները, վարձակալության պայմանագրով նախատեսված՝ էլեկտրաէներգիայի, ջրի, հեռախոսի վճարները և այլ կոմունալ ծախսերը համարվում են եկամտի ստացման հետ կապված անհրաժեշտ ծախսեր միայն այն դեպքում, երբ գործատուի և վարձու աշխատողի միջև կնքված աշխատանքային պայմանագրով ուղղակիորեն նախատեսված է, որ վարձու աշխատողի վարձատրությունը ներառում է նաև վերոնշյալ ծախսերը: Այդ դեպքում, գործատուի կողմից կատարված վերոնշյալ ծախսերը համարվում են աշխատանքի վարձատրության մաս, որի նկատմամբ եկամտահարկը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները



հաշվարկվում են օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով: Այն դեպքում, երբ գործատուի և վարձու աշխատողի միջև կնքված աշխատանքային պայմանագրով ուղղակիորեն նախատեսված չէ, որ վարձու աշխատողի վարձատրությունը ներառում է նաև կազ-

մակերպության կողմից վարձակալված և աշխատողի ժամանակավոր օգտագործմանը հանձնված բնակարանի համար գործատուի կողմից վճարվող վարձակալական վճարները, վարձակալության պայմանագրով նախատեսված՝ էլեկտրաէներգիայի, ջրի, հեռախոսի վճարները և այլ կոմունալ ծախսերը, ապա գործատուի կողմից կա-

տարված վերոնշյալ ծախսերը չեն համարվում եկամտի ստացման հետ կապված անհրաժեշտ ծախսեր և դիտարկվում են որպես վարձու աշխատողին անհատույց վճարվող եկամուտներ, որոնց նկատմամբ օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով հաշվարկվում է եկամտահարկ:

Փաստաթուղթ	«Կառավարման ապարատի պարզևատրույմների շահութահարկով հարկման որոշ հարցերի վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	19 հունվարի 2011թ., 01 փետրվարի 2011թ., N 7
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N 4 (387), 15.02.2011թ.

### Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ շահութահարկով հարկման նպատակով կառավարման ապարատի աշխատակիցներին տրվող պարզևատրման գումարները ենթակա են նվազեցման կազմակերպության հա-

մախառն եկամտից՝ անկախ պարզևատրման հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպության կողմից համախառն եկամուտ ստանալու հանգամանքից:

Փաստաթուղթ	«Անհուսալի կրեդիտորական պարտքերի գծով հարկային հաշվառման աննշվող որոշ հարցերի վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	19 հունվարի 2011թ., 01 փետրվարի 2011թ., N 8
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N 4 (387), 15.02.2011թ.

### Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ նշվում է, որ.

**1.** | Եթե կազմակերպության կողմից անձնակազմի աշխատավարձի գծով պարտքերը մինչև 01.07.2002թ. դուրս չեն գրվել, ապա ՀՀ կառավարության 19.12.2002թ. N 2052-Ն որոշումն (Կազմակերպությունների (բացառությամբ բանկերի և ապահովագրական ընկերությունների) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման կարգը հաստատելու մասին) ուժի մեջ մտնելուց հետո այդ պահի դրությամբ



կազմակերպության աշխատավարձի գծով առկա պարտքերը նշված կարգի կիրառության իմաստով որակվում են որպես կրեդիտորական պարտքեր: Այդ դեպքում, աշխատավարձի գծով առկա պարտքերը պետք է անհուսալի ճանաչվեն առավելագույնը 2003 թվականին:

**2.** | Եթե կազմակերպությունների կողմից աշխատավարձի գծով առկա վերոնշյալ

կրեդիտորական պարտքերը սահմանված կարգով անհուսալի չեն ճանաչվել և հաշվեկշիռի դուրս չեն գրվել՝ այդ չափով ավելացնելով հաշվետու տարվա հարկվող շահույթը, ապա դրանց մարման գումարները շահութահարկով հարկման նպատակով չպետք է նվազեցվեն համախառն եկամտից «Շահութահարկի մասին» ՀՀ օրենսդրության համապատասխան:

Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր հարկային պետական ծառայության պետի 2008 թվականի հունիսի 6-ի թիվ 06-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	10 հունվարի 2011թ, N 1-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 4 (387), 15.02.2011թ.
Ուժի մեջ է	Հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը

### Համառոտ նկարագիր

Հրամանով սահմանվում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահը՝ վերադաս հարկային մարմնի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների դեկավարների կողմից առաջարկված թեկնածուներից՝ յուրաքանչյուր կառուցվածքային ստորաբաժանումից մեկ անդամ, ինչպես նաև մեկ հարկային տեսչության պետ:

Գանգատարկման հանձնաժողովի նախագահը նշանակվում է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալների թվից: Գանգատարկման հանձնաժողովն ունի քարտուղար, որը չի հանդիսանում Գանգատարկման հանձնաժողովի անդամ: Գանգատարկման հանձնաժողովի անդամը, բացառությամբ Գանգատարկման հանձնաժողովի նախագահի, նշանակվում է 2 տարի ժամկետով:

Փաստաթուղթ	«Ռեզիդենտի կողմից շահութահարկի կանխավճարի եռամսյակային մեծությունը ինքնուրույն որոշելու մասին» և «Անհատ ձեռնարկատիրոջ կողմից եկամտահարկի կանխավճարի եռամսյակային մեծությունը ինքնուրույն որոշելու մասին» հայտարարությունների ձևերը հաստատելու մասին» ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը	26 հունվարի 2011թ. N 20-Ն
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական Նորմատիվ ակտերի տեղեկագիր № 4 (387), 15.02.2011թ.

### Համառոտ նկարագիր

Հրամանով հաստատվում են «Ռեզիդենտի կողմից շահութահարկի կանխավճարի եռամսյակային մեծությունը ինքնուրույն որոշելու մասին» և «Անհատ ձեռնարկատիրոջ կողմից եկամտահարկի կանխավճարի եռամսյակային մեծությունը ինքնուրույն որոշելու մասին» հայտարարությունների ձևերը:

«Ռեզիդենտի կողմից շահութահարկի կանխավճարի եռամսյակային մեծությունը ինքնուրույն որոշելու մասին» և «Անհատ ձեռնարկատիրոջ կողմից եկամտահարկի կանխավճարի եռամսյակային մեծությունը ինքնուրույն որոշելու մասին» հայտարարությունների ձևերը:




## 2. ՀԱՐԿԱՅԻՆ և ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

### 2.1 | Ծրագրեր և կատարողական

#### 2.1.1 | Ծրագրեր և կատարողական /մաքսային ծառայության մասով/

Սույն թվականի փետրվարի 1-4-ը ապահովվել է մասնակցություն ք. Երևանում կազմակերպված «Հարավային Կովկասում սահմանների համալիր կառավարում» ծրագրի շրջանակներում «Ռիսկի վերլուծություն և կառավարում» թեմայով երկկողմ աշխատաժողովին: Աշխատաժողովի ընթացքում ներկայացվել են ռիսկի վերլուծության և կառավարման ոլորտում առկա առաջավոր փորձը և ԵՄ չափանիշները, ԵՄ անդամ պետություններում գործող ռիսկերի կառավարման համակարգերը:

Սույն թվականի փետրվարի 8-ին ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Ծրագրերի կառավարման գործակալության կողմից ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում ՀՀ մաքսային և հարկային ծառայողների համար անց է կացվել շնորհանդես, որի նպատակն էր բարձրացնել պետական կառավարման մարմինների կողմից Եվրոպական Հանձնաժողովի աջակցության գործիքների (Twinning, TAIEX, SIGMA և այլն) կիրառման արդյունավետությունը:



ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի նիստի ընթացքում հավանություն է տրվել «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» սահմանային հսկիչ-անցագրային կետերի վերակառուցման տեխնիկական առաջադրանքին:

### 2.2 | Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

#### 2.2.1 | Գանգատարկումներ և ծառայողական քննություններ /հարկային ծառայության մասով/

20.01.2011թ-ից մինչև 20.02.2011թ-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել են թվով 7 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որի արդյունքում թվով 9 հարկային ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից

21.01.2011թ-ից մինչև 20.02.2011թ-ն ընկած ժամանակահատվածում լսվել է թվով 8 դիմում-գանգատ, որից.

- բավարարվել է 3 դիմում-գանգատ
- բավարարվել է մասնակի 2 դիմում-գանգատ
- մերժվել է 3 դիմում-գանգատ:

### 2.3 | Միջազգային համագործակցություն

2011թ. հունվարի 31-ից մինչև փետրվարի 3-ը ք. Երևանում տեղի է ունեցել Ռուսաստանի Դաշնության Դոմոդեդովո, Վնուկովո, Շերեմետևո և Չվարթնոց օդանավակայանների մաքսային ծառայությունների պատվիրակությունների աշխատանքային հանդիպումը՝ նվիրված կողմերի միջև համագործակցության և փոխգործակցության խորացմանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են երկուստեք հետաքրքրություններ կայացնող այնպիսի հարցեր, ինչպիսիք են «Չվարթնոց» միջազգային օդանավակայանի ավիացիոն անցակետով Ռուսաստանի Դաշնությունից երրորդ երկրներ, ինչպես նաև երրորդ երկրներից դեպի Ռուսաստանի Դաշնություն ուղևորվող տարանցիկ ուղևորների և նրանց ուղեբեռների նկատմամբ ուղևորային տերմինալի աշխատանքը, մաքսային հսկողության տարածքում և ժամանակավոր պահպանման պահեստում հսկողության և մաքսային ձևակերպումների իրականացումը, ՌԴ-ում և ՀՀ-ում գտնվող ապրանքների միջազգային օդանավակայաններով տեղափոխվող ապրանքների մաքսային ձևակերպումներին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերի փոխանակման հնարավորությունը, մաքսային օրենսդրության մեջ ուղևորների և ուղեբեռների մաքսային ձևակերպումներին վերաբերող դրույթների փոփոխության դեպքում միմյանց տեղեկացնելը և այլն:



Կողմերը պայմանավորվեցին զարգացնել ահաբեկչության և թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի շրջանակներում մոսկովյան ավիահանգույցի աշխատակիցների մոտ առկա տեղեկատվության և փորձի փոխանակման մասով համագործակցությունը:

Հանդիպման արդյունքում ձեռք բերվեցին նաև կոնկրետ պայմանավորվածություններ Երևան-Մոսկվա, Մոսկվա-Երևան ավիաչվերթների իրականացման ընթացքում ուղևորներին մաքսային օրենսդրության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման, կատարված փոփոխությունների իրազեկման մեթոդների վերաբերյալ (տեղեկատվական գրքույկների միջոցով):

### 2.4 | Ռուսուցում, մրցույթ և առաջխաղացում

2010թ. հոկտեմբերին կայացած ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության թափուր պաշտոնների մրցույթում հաղթող ճանաչված և կադրերի ռեզերվում ընդգրկված դիմորդներից 2011թ. հունվարին հարկային ծառայության պաշտոնի են նշանակվել 3-ը:

ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 18-ի N 1489-Ն որոշման համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության մասով 2011թ. հունվարին կատարվել են կառուցվածքային նոր փոփոխություններ.

■ Արաբկիրի հարկային տեսչությունը վերակազմակերպվել է՝ միանալով Արաբկիրի 1 հարկային տեսչությանը,

■ Սպանդարյանի և Սպանդարյանի 1 հարկային տեսչությունները միաձուլման ձևով վերակազմակերպվել են Կենտրոնի հարկային տեսչության,

■ Խորհրդայինի և Շահումյանի հարկային տեսչությունները վերանվանվել են համապատասխանաբար՝ Նոր Նորքի և Մալաթիա-Սեբաստիայի հարկային տեսչությունների,

Կատարվել են նաև հարկային տեսչությունների կառուցվածքային փոփոխություններ՝ Մյասնիկյանի, Արաբկիրի և Կենտրոնի հարկային տեսչություններում հարկ վճարողների սպասարկման և տվյալների մշակման բաժինները վերակազմավորվել են մեկ՝ տե-

ղեկատվության և վերլուծության բաժնի, իսկ կանխատեսումների և հավաքագրումների և սոցիալական վճարների և եկամտահարկի հավաքումների և ստուգումների բաժինները՝ կանխատեսումների և ընթացիկ հսկողության բաժնի:

## 2.5 | Հարկային և մաքսային թվերի համառոտագիր

### 2.5.1 | Հարկային վիճակագրության մի քանի թվեր

1	Ցուցանիշ	2011 թվական	
		Հունվար	Աճը նախորդ տարվա նկատմամբ (հունվար)%
1	2	3	4
1	Հաշվառված՝ ՀՎՀՀ ստացած հարկ վճարողներ	836	83.3
2	Հարկային մարմնի կողմից պետություն հավաքագրված եկամուտներ (մլն դրամ), այդ թվում՝	37,765	130.7
2.1	ԱԱՀ	9,757	111.4
2.2	Շահութահարկ	5,354	119.2
2.3	Ակցիզային հարկ	900	138.4
2.4	Եկամտահարկ	5,172	116.4
2.5	Պարտադիր սոցիալական ապահովության վճար	8,540	125.9
2.6	Այլ	8,042	213.7
3	Հարկային մարմնի կողմից կատարված ստուգումներ (հատ)	1,139	139.4
4	Հարկային ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարներ (մլն. դրամ)	406	61.5

### 2.5.2 | Մաքսային վիճակագրության մի քանի թվեր

1	Ցուցանիշ	2010թ.	2011թ.	Աճը նախորդ տարվա նկատմամբ %
		Հունվար	հունվար	
1	2	3	4	5
1	Մաքսային մարմնի կողմից պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ (մլն դրամ)	17 998	15 204	84.5
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը (մլն դրամ), այդ թվում՝	111 318	115 135	103.4
2.1	Արտահանում (մլն դրամ)	21 228	23 980	113.0
2.2	Ներմուծում (մլն դրամ)	90 090	91 155	101.2
3	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվը (միավոր)	2 550	2 973	116.6

ևս մեկ քայլ՝

# ԲԻԶՆԵՍԻՆ ԸՆԴԱՌԱԶ



եռամսյա պարբերականությամբ  
հրատարակվում են  
«Հարկատու» և «Մաքսատուն»  
ամսագրերը